2505

3K26
9- -81

Հ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 21

Պրոլետարներ բոլոր յեկեղեցիների, միացեք

Ն. ԳՈՐԲՈՒՆՈՎ

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՇԽԱՏՈՒՄ ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԸ

3К26
9-81

ԲԵՐԼԻՆ
1921

22 MAR 2013

07 JUN 2005

3886
9-81
300
1215-90

20 NOV 2009

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Ն. ԳՈՐԲՈՒՆՈՎ

ԻՆՉՊԵ՞Ս ԵՐ ԱՇԽԱՏՈՒՄ

ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԸ

1003
11603

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԵՐԵՎԱՆ
1924

2505

Տպագրական Տրեստի 2-րդ տպարան. № 3814. Տիրաժ 5000.

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱՇԽԱՏՈՒՄ ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԸ

Ինձ, կուսակցության յերիտասարդ անդամիս, հեղափոխության տարիներում Վլադիմիր Իլյիչի անմիջական ղեկավարությամբ աշխատելու հակայական յերջանկությունն է վիճակվել, 1917—1918 թ. թ. իբր Ժողկոմխորհի քարտուղար, իսկ 1920 թ. վերջից՝ իբր Ժողկոմխորհի գործերի վարիչ։ Վլադիմիր Իլյիչի տաղանդակ հանձնարարությունները կատարելով՝ յես հնարավորություն ունեցի մոտիկից, որը որին դիտելու նրա աշխատանքը։ Վլադիմիր Իլյիչի բազմակողմանիորեն հանճարեղ մտքի ամենաապշեցնող հատկություններից մեկն այն եր, որ նա, առանց իր առանձնատեղյակից դուրս գալու, կարողանում եր հետևել ոչ միայն Ռուսաստանի, այլ և ամբողջ աշխարհի սրտի բաբախումին։ Ուրիշ աչքի համար աննկատելի յերևույթներից նա կարողանում եր ճիշտ և անսխալ կերպով ըմբռնել ու վորոշել դասակարգային ուժերի փոխհարաբերությունների ամենափոքր փոփոխություններն անդամ։ Այս բանին նա հասնում եր կազմակերպությունների, ինչպես և մասնավոր մարդկանց հետ ունեցած իր մեծաքանակ կապերով։ Մի շարք պարզ հարցերով նա կարողանում եր ստուգել իր խոսակցի տվյալների լրջությունը, քննադատորեն վերլուծել այն, արագորեն ըմբռնել գործի եյությունը, առանձնացնել կարևոր փաստերը, վորոնք յերբեմն առաջին հայացքից թվում եյին աննշան ու քիչ կարևոր. այդ փաստերի հա-

մաձայն նա կազմում եր իր հանճարեղ յեզրակացություններն ու պրոգնոզները (հիվանդության ընթացքի նախագուշացումները)։ Վլադիմիր Իլյիչի հարցերը յերբեմն փակուղու մեջ եյին ձգում մինչև իսկ շատ լավ պատրաստություն ունեցող խոսակիցներին։ Շատ անգամ ընկերները ասում եյին, թե Վլադիմիր Իլյիչի հետ զրուցելուց հետո՝ նրանք սկսում եյին պարզորոշ հասկանալ այն, ինչ վոր մինչ այդ ծածկված եր նրանց համար։ Հաճախ եր պատահում, վոր ավյալ հարցում իրենց մասնագետ համարող ընկերները, Վլադիմիր Իլյիչի հետ զրուցելուց հետո՝ պարզում եյին, թե յեապես իրենք ամենևին չեն ընդկրկել իրենց առարկան։ Վլադիմիր Իլյիչի մոտ յեկող ու զրուցող ամեն մի խոսակից ձեռք եր բերում վորևե նոր ու արժեքավոր բան, ինչ վոր նոր ու լայն հորիզոններ, վստահություն ու հաստատ հիմք իր աշխատանքների մեջ։

Այսպիսի զրույցներով և ինչվոր, առանձին, իրեն միայն հատակ ինտուիցիայով, Վլադիմիր Իլյիչը իր մեջ ծծում եր կոլեկտիվ միտքն ու մասսայի փորձը, այդ ամենը վերամշակում եր իր զարմանալի ուղեղով և վեր ածում մեծ լոզունգների, վորոնք լույսի խուրձերի նման լուսավորում եյին հեղափոխության ուղիները։

Աշխատանքի մեջ Վլադիմիր Իլյիչը չափազանց խստապահանջ. եր՝ զարմանալի համառությամբ աշխատում եր, վոր ամենափոքրիկ գործերն անգամ մինչև վերջ կատարվեն, առանձին անգամներ կատարումը ստուգում եր, անձամբ զանգահարում եր՝ որինակ, իր ուղարկած ծրարի ստացումը ստուգելու համար, անխնա կերպով հետապնդում եր ամեն մի անփութություն և անհոգություն, այդ ամենը հրապարակ եր հանում. չեր հոգնում հազարավոր անգամ մատնանշելուց՝ սպեցիֆիկ ռուսական թափթփվածություններ, աշխատանքի անվարժություններ, անկանոնություններ ու անկուլտուրականություններ։ Բայց Վլադիմիր Իլյիչը կարողանում եր այս ամենը այնպիսի ձևով անել, վոր վոչ վոք յերբեք իրեն վիրավորված չեր զգում, մինչևիսկ այնպիսի դեպքերում, յերբ Վլադիմիր Իլյիչը նրա գլխին թափում եր բոլոր պատիժները անգամ բանդարկության յենթարկում։

Զբաղված լինելով կարևորագույն, հաճախ համաշխարհային մասշտաբի քաղաքական հարցերով, Վլադիմիր Իլյիչը միևնույն ժամանակ չեր կարվում նաև ընթացիկ գործերից։ Նա չափազանց մատչելի եր և առույգ կերպով արձագանքում եր համեմատական չափով հարյուրավոր ու հազարավոր անգամ ավելի մանր հարցերին։ Այդ բանը նրան հնարավորություն եր տալիս միշտ ել ընթացիկ կյանքին ծանոթ լինելու։ Յերբեմն Վլադիմիր Իլյիչը վորևե գործնական փոքրիկ աշխատանքի մինչև վերջ կատարելուն շատ ավելի մեծ նշանակություն եր տալիս, քան Ժողկոմխորհի և Ա. Պ. Թ. տասնյակ վորոշումներին։

Ահա մի քանի նմուշներ Վլադիմիր Իլյիչի այն հանձնարարություններից, վոր նա ամեն որ անում եր տասնյակներով։ Վերցրած որինակները վերաբերվում են 1921 թ. հունվար փետրվարին. ձեռակերպումը համարյա բառացի է։

«Ամեն միջոց ձեռք առնել, վորպեսզի Գորկա ավանի և Սիյանովա գյուղի գյուղացիների խնդիրը իրենց մոտ ելեքտրական լուսավորություն սարքելու մասին ամենակարճ ժամանակամիջոցում բավարարվի»։

«Զբաղվել հիդրոտորֆի գործով և գործը առաջ մղել, վորովհետև այնտեղ աշխատող մասնագետները մինչև այժմ չեն կարողացել խորհրդային աշխատանքի պայմաններին հարմարվել և բավական անոգնական են։ Այս գործը շատ կարևոր է»։

«Հետևել և սրմել Մոսկվան ավելորդ որդաններից ու հիմարկություններից ազատելու գործին։ Կրճատել ուռեցրած ու տարածվող հիմարկությունները։ Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի այդ աշխատանքը կատարող հան-

ճնաժողովի մեջ լինեն արտակարգ յեռանդուն մարդիկ, նույնպես և մի յերկու հին մոսկվիչներ, վորոնք Մոսկվայի գործերին լավ են ծանոթ»։

«Կանոնավորել Ա. Պ. Խ. (հետագայում պետպլանի) կից մասնագետների խորհրդի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները։ Առաջին հերթին կազմել գործը լավ իմացող, խոշոր մասնագետ, լայն կրթություն ունեցող և խորհրդային պայմաններում արդյունավետ աշխատանք կատարելու ընդունակ ճարտարապետների ու յերկրաբանների մի խմբակ»։

«Որենսդրական նախագծերի բաժանմունքի աշխատանքները ուժեղացնել այնպես, վոր բոլոր դեկրետներն ու վորոշումները ժողկոմխորհ մտցվին ավելի մշակված, համաձայնեցված վիճակում և չվճռվեն վռազով»։

«Պրոպագանդա մղել, վորպեսզի բանվորները մտնեն բանգյուղ-տեսչության մեջ սա միակ միջոցն է բյուրոկրատիզմի դեմ մղվող կռիվը իր նպատակին հասցնելու համար։ Սերտ կապ հաստատել ժողկոմատների հետ և աշխատանքի համար ոգտվել նրանց ապպարատներով։ Առաջին հերթին վարժեցնել ու վարժվել Ներքգործժողկոմատի և բանգյուղտեսչության ապարատներով ոգտվելուն»։

«Հատկապես հետևել և ամեն կերպ աջակցել Ռադիոհեռագրային կապի զարգացմանը»։

«Պարզել՝ թե ինչու Նավթային կենտրոնական վարչությունը բանվորներին 30-տական արշինի փոխարեն ութական արշին մանվածքներ և բաժանել»։

«Ամերիկայից, Գերմանիայից և Անգլիայից զրակցություն դուրս գրել տեղերիգացյայի և աշխատանքի գիտական կազմակերպման մասին։ Զբաղվել այդ հարցով»։

«Աշխատել, վորպեսզի «Ամո» գործարանը ամբողջովին հանձնվի ամերիկական բանվորների (Զիժովի, Գլազունի) խմբին՝ ավտոմասերի օրինակելի արտադրություն կազմակերպելու համար»։

«Պարզել հոդմային շարժիչները գյուղի լուսավորության համար ոգտագործելու հարցը»։

Յես դիտմամբ առաջ բերի գանազան հանձնարարությունների այս ցուցակը, վորպեսզի ցույց տամ, թե ինչքան բազմակողմանի ու բազմակերպ եր Վլադիմիր Իլյիչի ընթացիկ աշխատանքը։ Պետք է ի նկատի առնել, վոր այսպեսի հանձնարարությունները հարյուրներով ու հազարներով էին։

Շատ ավելի կարևոր բնույթ ունեցող հանձնարարությունների մի հսկայական քանակություն Վլադիմիր Իլյիչը անմիջականորեն ուղարկում եր պատասխանատու ընկերներին։

Յեզրափակելու համար՝ ցանկանում եմ առաջ բերել 1918 թվին սկզբներին վերաբերվող մի անչափ հետաքրքիր փաստաթուղթ, վոր ընութագրում է Վլադիմիր Իլյիչի զարմանալի համեստությանը։

Դրամների արժեքազրկման հետևանքով, 1918 թվի մարտ 1-ին, առանց Վլադիմիր Իլյիչի թույլտվության՝ նրա ռոճիկը ավելացրել էին 500-ից 800 ռուբլու։ Ի պատասխան դրա՝ նա ինձ ուղարկեց հետևյալ պաշտոնական գրությունը։

«Ժողկոմխորհի քարտուղար Ն. Պ. Գորբունովին։

Ի նկատի առնելով, վոր դուք չեք կատարել իմ հատատ պահանջները՝ 1917 թվի մարտ ամսի մեկից իմ ռոճիկն ամսական 500-ից 800 ռուբլու ավելացնելու հիմունքը ցույց տալու մասին, ի նկատի առնելով այդ ավելացման ակնհայտ ապօրինությունը, վոր դուք ինքնագլուխ կերպով կատարել եք խորհրդի գործերի վարիչ Վ. Դ. Բոնչ Բրույեվիչի համաձայնությամբ՝ իբր անմիջական խախտումն Ժ. Կ. Խ. 1917 թվի նոյեմբեր 23-ի դեկրետի, հայտարարում եմ ձեզ խիստ նկատողություն։

«Վ. Ուլյանով (Լենին)»։

Պետք է նկատվի, որ դրանից մի քանի օր առաջ Վլադիմիր Իլյիչը ինձ հանձնարարել էր միջոցներ ձեռք առնել առանձին Ժողկոմատների ռոճիկները ավելացնելու և մասնավորապես, Ֆինժողկոմատում, ընկեր Գուկովսկուն 2.000 ռուբլի ռոճիկ վճարելու մասին։

Առհասարակ համեստությունը Վլադիմիր Իլյիչի հիմնական առանձնահատկություններից մեկն էր։

Ցեռ կարծում եմ, որ անչափ ոգտակար կլինի, յեթե զբաղվենք հատուկ ուսումնասիրությամբ, թե Վլադիմիր Իլյիչը ինչպես էր աշխատում, թե ինչպես առանձին փաստերից ու առանձին միջոցներից, նա, սատիճանական կերպով մշակում էր քաղաքական կարևորագույն վճիռներ, որոնք մեր քաղաքականության համար դարձակետեր էին։ Անհրաժեշտ է, որ Լենինի ինստիտուտում հավաքվեն, կարգի բերվեն և ուսումնասիրվեն բոլոր այն գրությունները ու նկատողությունները, որոնք բնութագրում են նրա աշխատանքը և շատ անգամ արվել են թղթի կտորների վրա։ Անհրաժեշտ է հավաքել նաև այն մարդկանց նյութերը, որոնք աշխատանքի ժամանակ այսպես կամ այնպես շփում են ունեցել Վլադիմիր Իլյիչի հետ և նրանից անմիջական կերպով հանձնարարություններ են ստացել։ Լենինի ինստիտուտը ի թիվս իր այլ աշխատանքների, հատուկ ուշադրություն պիտի դարձնի այն բանի վրա, որ Վլադիմիր Իլյիչի աշխատանքի մեթոդները լայն մասսաների սեփականություն դառնան։

Հ.Ս.Հ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
ԱՄՈՍՅԱՆ, ՄԱՏՍՈՒԿՅԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.